ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» «----------» 2019թ. N --- - Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
Մ. ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ 8/2 ՀԱՍՑԵԻ
ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ. 41-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն համարվող Մ. Բաղրամյան պողոտայի 3-րդ նրբանցքի 8/2 հասցեի՝ 26,1քմ մակերեսով բնակելի տունը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ. 30012017-01-0326 վկայական/ սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Գեղանուշ Սահակյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ Մ. ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂ. 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ 8/2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Արաբկիր վարչական շրջանի Մ.Բաղրամյան պողոտայի 3-րդ նրբանցքի հ.8/2 հասցեի՝26,1քմ մակերեսով բնակելի տունը սեփականության իրավունքով օտարել /նվիրել/ Գեղանուշ Սահակյանին:

Մ.Բաղրամյան պողոտայի 3-րդ նրբանցքի հ.8/2 հասցեում գտնվող բնակելի տունը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.30012017-01-0326 վկայականի, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Գեղանուշ Սահակյանը 27.12.1988թ. առուծախի պայմանագրով Հովման և Վլադիմիր Խուդոյաններից ձեռք է բերել Մ.Բաղրամյան պող. 3-րդ նրբանցք 8 հասցեի անշարժ գույքը, որին Երևանի քաղաքապետի 23.03.2015թ. հ. 839-Ա որոշմամբ տրամադրվել է «Մ. Բաղրամյան պող. 3-րդ նրբանցք 8/1 բնակելի տուն» հասցեն: Արդյունքում գրանցվել է վերջինիս սեփականությունը, որը բաղկացած է 140.15քմ շինություններից և ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող հողամասերից /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.29052019-01-0272 վկայական/:

Հովման և Վլադիմիր Խուդոյաններին պատկանող բնակելի տան որոշ հատվածներ /26.1 քմ շինություն/ նախկինում պետականացված է եղել և չի ներառվել Գ.Սահակյանի հետ կնքված առուծախի պայմանագրում: Հետագայում, պետականացված շինությունների նկատմամբ գործող օրենսդրության համաձայն ձևակերպվել է Երևան համայնքի սեփականությունը և քննարկվող 26.1քմ մակերեսով շինությանը տրամադրվել է Մ.Բաղրամյան պողոտայի 3-րդ նրբանցքի հ.8/2 հասցեն և գրանցվել է Երևան համայնքի սեփականության իրավունքը:

Համայնքային սեփականություն հադիսացող հատվածը փաստացի ներառված է Գեղանուշ Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան մեջ, որը սկսած 1988 թվականից փաստացի տիրապետվում և տնօրինվում է վերջինիս կողմից:

ՀՀ կադաստրի կոմիտեի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի ստորաբաժանման տվյալների համաձայն՝ Գեղանուշ Սահակյանի անվամբ Մ.Բաղրամյան պողոտայի 3-րդ նրբանցքի հ.8/1 հասցեի բնակելի տան նկատմամբ գրանցված է սեփականության իրավունք, իսկ վերջին 5 տարվա ընթացքում նրա կողմից կնքված անշարժ գույքի ձեռք բերման կամ օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում Հայաստանի Հանրապետությունում կատարված չէ:

Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ.41-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով, այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ. 41-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել ընդունելու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ Մ.ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ 8/2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Մ.Բաղրամյան պողոտայի 3-րդ նրբանցքի հ. 8/2 հասցեի բնակելի տունն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ Մ. ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ 8/2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Մ.Բաղրամյան պողոտայի 3-րդ նրբանցքի հ. 8/2 հասցեի բնակելի տունն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ